# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1389 06.12.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,

գեներալ-լեյտենանտ

պարոն. Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի նոյեմբերի 26-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի ՁՊՎ և արձանագրել էր մի շարք թերություններ և խախտումներ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾԱԿԲ
ՄՏԻՑ № 5229
«10» 12 2013 թ.

Թերություններ.

1. 4-րդ խցում առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում, որի փաստը հաստատում էր նաև այն հանգամանքը, որ մյուս բոլոր խցերի սպիտակեղենները գտնվում էին պոլիէթիլենային թաղանթի մեջ, իսկ 4-րդ խցում՝ օգտագործումից հետո չէին հավաքել մահճակալի վրայից: Անհրաժեշտության դեպքում կարող ենք ներկայացնել փաստը հաստատող լուսանկարը:
2. ՁՊՎ-ն չունի տեսակցության սենյակ: Տեսակցության սենյակ հիշեցնող փաստը նա է, որ քննչական սենյակը հերթապահ ոստիկանից սենյակից բաժանում է օրգանական ապակին:
3. Ճաշասենյակի ջրի ծորակը խափանված էր:
4. Այցելության ընթացքում ՁՊՎ-ում բացակայում էր ջրամատակարարումը և ՁՊՎ-ում չկար տեղադրված ջրի բաք:

ՀՀ Ոստիկանության Քարտուղարություն
Մուտք Թիվ 8325
«10» 12 2013թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

Խախտումներ՝

1. Աղաս Սաշայի Ավետիսյանը Նաիրիի ՀՊՎ բերման է ենթարկվել 22.02.2013թ-ին ժամը $12^{00}$-ին: Ձերբակալվել է ժամը $14^{50}$, իսկ ՀՊՎ է ընդունվել ժամը $18^{20}$-ին: Ըստ <<Ձերբակալվածներին խցերի դուրս բերելու>> գրանցամատյանի՝ Աղասի Ավետիսյանը խցից դուրս է բերվել և դատարան է տեղափոխվել խափանման միջոց կիրառելու նպատակով՝ 25.02.2013թ-ին ժամը $14^{20}$-ին:

   Արդյունքում՝ խախտվել է Աղասի Ավետիսյանի ՀՀ սահմանդրությամբ նախատեսված իրավունքը և նա արգելանքի տակ է գտնվել 74 ժամ 20 րոպե: */փաստը հաստատող լուսանկարներ – 1,2,3/*

2. Դիտորդական խմբի այցելության ժամանակ ՀՊՎ-ի օրվա հերթապահ Արմեն Արշակյանը բացակայում էր ՀՊՎ-ից: Ա. Արշակյանը ՀՊՎ էր ժամանել Խմբի մոնիթորինգի ավարտի պահին, իսկ այդ ընթացքում խմբին ուղեկցում էր հերթապահ մասի հերթապահ ոստիկանը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն վերը նշվածների վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երեւան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3690 << 28 >> 12 2013թ.

Ձեր 06.12.2013թ. թիվ 2621/1389 գր.

**ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին**

**Հարգելի տիկին Սահակյան**

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ նոյեմբերի 26-ին ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ քննչական գլխավոր և Կոտայքի մարզային վարչություններում կատարվել են ծառայողական քննություններ, որոնց կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

**Արձանագրված թերություններ**

1. Նշված թերությունը վերացվել է:
2. Շենքային պայմանների և այն վերակառուցման անհնարինության պատճառով ՁՊՎ-ում քննչական սենյակը համատեղության կարգով օգտագործվում է նաև տեսակցությունների տրամադրման նպատակով, որի համար նշված սենյակի և ՁՊՎ հերթապահ ոստիկանի սենյակի միջնապատի վրա տեղադրվել է օրգանական ապակի, այն որոշ չափով պահանջվող նորմերին համապատասխանեցնելու համար:
3. Սննդի տաքացման սենյակի ջրի ծորակը եղել է սարքին վիճակում, սակայն ջուրը չի հոսել ջրամատակարարման բացակայության պատճառով:
4. ՁՊՎ-ում ջրամատակարարումը կատարվում է Եղվարդ քաղաքի սահմանված ընդհանուր ջրամատակարարման գրաֆիկով, ըստ որի ջուրը տրվում է համապատասխան ժամերին: Այդ ժամերից դուրս ՁՊՎ-ում ջուր ունենալու նպատակով լոգարանում տեղադրված է ջրի բաք, որը չի սնուցում խցերը, սակայն անհրաժեշտության դեպքում նրանից օգտվում են ինչպես խմելու այնպես էլ լվացվելու կամ լողանալու համար:

**Արձանագրված խախտումներ**

1. Ա.Ավետիսյանին արգելանքի տակ պահելու օրենքով սահմանված առավելագույն ժամկետի խախտելու փաստը կատարված ծառայողական քննությունների արդյունքում հիմնավորվել է, որի համար ոստիկանության քննչական գլխավոր վարչության Նաիրիի քննչական բաժանմունքի քննիչ Ս.Սուքիասյանին և Նաիրիի բաժնի ավագ տեսուչ հերթապահ՝ Ա.Ասատրյանին ու համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ՝ Մ.Հախվերդյանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկվել է համապատասխան վարչությունների օպերատիվ խորհրդակցություններում և վերջիններս խիստ նախազգուշացվել են:

2. Դիտորդների խմբի այցելության օրը ՁՊՎ-ում պահվող անձինք չեն եղել և ՁՊՎ-ի օրվա հերթապահ Ա.Արշակյանը խմբի անդամներին չի ուղեկցել, քանի որ վերջիններիս ուղեկցել են բաժնի պետը և օրվա տեսուչ հերթապահը, իսկ Ա.Արշակյանը այդ ընթացքում գտնվել է հերթապահ մասում:

Միաժամանակ հայտնվում է, որ ոստիկանության ստորաբաժանումներում, այդ թվում և ՁՊՎ-ներում, ծառայության կազմակերպման, ծառայողների տեղաբաշխման, ինչպես նաև վերակարգի ծառայության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը զուտ ոստիկանության ղեկավարության իրավասությունն է, որը մշտապես գտնվում է ուշադրության կենտրոնում:

**ՀՀ ոստիկանության շտաբ**